Ընտրելու իրավունք **բոլորի** համար

Հաշմանդամ ընտրողների հետ վարվելակերպի կանոններ

(ուղեցույց ընտրական հանձնաժողովների համար)

Սույն ուղեցույցն արժանացել է
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հավանությանը:
«Ունիսոն» ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում
ՀՀ ԿԸՀ նախագահ Գարեգին Ազարյանին
խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու համար:

Մեր երկրում բնակվող շուրջ 148.000 հաշմանդամներից շատերն ունեն ընտրելու իրավունք: Հաշմանդամ քաղաքացիների ընտրական իրավունքն ապահովելու համար անհրաժեշտ է, որ գործընթացի համար պատասխանատու անձինք ստեղծեն համապատասխան պայմաններ և տիրապետեն վարվելակերպի կարևորագույն կանոններին: Վերջիններիս ծանոթ լինելը օգտակար է ոչ միայն ընտրությունների բնականոն ընթացքն ապահովելու, այլև հաշմանդամների հետ առօրյա կյանքում շփվելու համար:

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Սույն հրապարակումը իրականացվում է
Բաց Հասարակության Ինստիտուտի և
Նիդեռլանդների Կառավարության
ֆինանսական միջոցներով

Սայլակ օգտագործող մարդուն աստիճաններով բարձրացնելու կամ իջեցնելու համար անհրաժեշտ է երկու օգնական: Դրանից ավել օգնականների առկայությունը արդյունավետ չէ և կարող է առաջացնել ավելորդ խառնաշփոթ: Ֆիզիկապես առավել ուժեղ օգնականը պետք է տեղավորվի սայլակի հետևից, իսկ երկրորդը՝ դիմացից: Աստիճաններով բարձրանալիս՝ սայլակ օգտագործող մարդը պետք է աստիճաններին միտված լինի մեջքով, իսկ իջնելիս՝ դեմքով: Սեղմելով սայլակի ետնամասում գտնվող հորիզոնական ձողը՝ առաջին օգնականը կիսով չափ բարձրացնում է սայլակի առջևի անիվները և ծանրության կենտրոնը տեղափոխում ետևի անիվների վրա, իսկ երկրորդն օգնում դիմացից՝ բռնելով սայլակը ոտնատեղից:



Հասնելով անհրաժեշտ հարկը, սայլակը պետք է տեղադրել իր ճիշտ դիրքով՝ համոզվելով, որ այն աստիճաններից ապահով հեռավորության վրա է:



Երբեք մի փորձեք բարձրացնել սայլակը բռնատեղերից, քանի որ մարդը կարող է սահելով դուրս ընկնել սայլակից:

Այնուհետև, չանջատելով ետևի անիվները գետնից և պահպանելով սայլակի հավասարակշռությունը՝ օգնականները սկսում են աստիճան առ աստիճան բարձրացնել սայլակ օգտագործող մարդուն:

Սայլակը պետք չէ բռնել արմնակալերից, քանի որ նրանք կարող են անջատվել սայլակից:

Ընդհանուր կանոններ

Երբ խոսում եք հաշմանդամի հետ, անմիջապես դիմեք նրան, և ոչ թե ուղեկցողին կամ սուրդոթարգմանչին:

Եթե Ձեզ թվում է, թե հաշմանդամին օգնություն է պետք, հարցրեք նրան այդ մասին: Դրական պատասխանի դեպքում հարցրեք, ինչ և ինչպես անել:

ՀՀ այլ քաղաքացիների հետ հավասար՝ հաշմանդամ ընտրողներն ունեն գաղտնի քվեարկության իրավունք: Հարգե՛ք այդ իրավունքը:

Սայլակ օգտագործող ընտրողներ



Ընտրատեղամասերը պետք է լինեն մատչելի, հարմարեցված տեղաշարժման խնդիրներ ունեցող մարդկանց համար: Յուրաքանչյուր տեղամասի մուտքը պետք է լինի հարթ կամ ունենա թեքահարթակ, դռների լայնությունը չպետք է 75 սմ-ից պակաս լինի, քվեախցիկի մուտքն ու ելքը պետք է լինեն ազատ, իսկ քվեատուփը դրված լինի սայլակին նստած մարդուն հասանելի բարձրության վրա:

Քանի դեռ Հայաստանում այս բոլոր պայմանները չեն ստեղծվել սայլակ օգտագործող քաղաքացիների համար, առաջարկում ենք կիրառել հետևյալ կանոնները՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող ընտրողների մասնակցությունը ապահովելու նպատակով:

Կույր կամ տեսողության խնդիրներ ունեցող ընտրողներ

Համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 14.03.2007թ. ընդունված թիվ 47-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ ընտրողների ցուցակում տեսողության հետ կապված ինքնուրույն ստորագրելու հնարավորություն չունեցող ընտրողին՝ նրա խնդրանքով, կարող է օգնել այլ քաղաքացի, ով չպետք է լինի հանձնաժողովի անդամ կամ վստահված անձ: Մնացած դեպքերում ընտրողի ցանկությամբ նրան կարող է օգնել (այդ թվում՝ ընտրողի կամքով լրացնել նաև քվեաթերթիկը) ցանկացած քաղաքացի, բացառությամբ վստահված անձի:

Քաղաքացիների քվեարկությանը մասնակցելուն օժանդակելու նպատակով ընտրությունների ժամանակ պատրաստվում և տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացվում է քվեաթերթիկին համապատասխանող՝ ստվարաթղթե կաղապար (ձևանմուշ), որում քվեաթերթիկի նշումի համար նախատեսված քառանկյանը համապատասխան տեղում բացված են դատարկ V ձևի անցքեր:

Հանձնաժողովի՝ քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ տրամադրող անդամը քվեաթերթիկը տեղավորում է քվեաթերթիկին համապատասխանող կաղապարում և քվեարկության ծրարի հետ միասին տրամադրում ընտրողին: Քվեախցիկի մոտ ընտրողի խնդրանքով հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամը, իսկ ընտրողի ցանկության դեպքում՝ քվեաթերթիկը լրացնելիս ընտրողին օգնելու իրավունք ունեցող քաղաքացին, ընտրողի համար՝ ըստ հերթականության, կարդում է քվեաթերթիկում ընդգրկված թեկնածուների, կուսակցությունների, դաշինքների վերաբերյալ քվեաթերթիկում նշված տվյալները և

հնարավորություն է տալիս ընտրողին քվեախցիկում գաղտնի լրացնել քվեաթերթիկը: Ընտրողը, իմանալով իր նախընտրած թեկնածուի, կուսակցության, դաշինքի հերթական համարը քվեաթերթիկում, շոշափելով գտնում է կաղապարի համապատասխան դատարկ անցքը և ինքնուրույն V ձևի նշում կատարում քվեաթերթիկում: Քվեաթերթիկում V ձևի նշում կատարելուց հետո ընտրողը քվեաթերթիկը հանում է կաղապարից, ծալում, ինքնուրույն կամ հանձնաժողովի անդամի կամ իրեն ուղեկցող քաղաքացու օգնությամբ տեղավորում այն քվեարկության համապատասխան ծրարում:

Խուլ կամ լսողության խանգարումներով ընտրողներ

Խուլ կամ լսողության խանգարումներով մարդկանց հետ հաղորդակցվելիս պետք չէ բղավել՝ դա անարդյունավետ է: Որոշ դեպքերում լսողության խնդիրներ ունեցող մարդիք կարողանում են ասվածը հասկանալու համար կարդալ խոսակցի շուրթերով: Այսպիսի մարդկանց հետ խոսելիս՝ դեմքով կանգնեք դեպի լույսը և աշխատեք, որ Ձեր բերանի շարժումները պարզ երևան: Խոսեք դանդաղ և հասկանալի կերպով, նայեք զրուցակցի աչքերին: Եթե պարզվում է, որ խուլ ընտրողը չի կարդում շուրթերով, ապա անհրաժեշտության դեպքում գրեք այն, ինչ ցանկանում եք հաղորդել նրան և հնարավորություն տվեք գրավոր ձևով պատասխանել Ձեզ:

Այլ ընտրողներ

(տարեց, թաքնված հաշմանդամություն և այլ ֆիզիկական խնդիրներ ունեցող քաղաքացիներ)

Հաշմանդամության ոչ բոլոր տեսակներն են ակնառու: Ընտրողը կարող է Ձեզ անսպասելի հարցեր տալ կամ գործել տարօրինակ թվացող ձևով: Նրա խնդրանքը կամ վարքը կարող է պայմանավորված լինել հաշմանդամությամբ, տարիքային առանձնահատկություններով կամ այլ հանգամանքներով:

Համբերատար եղեք, ուշադիր լսեք, անհրաժեշտության դեպքում կրկնեք կամ խնդրեք կրկնել ասվածը:

Հեղինակներ
Արմեն Ալավերդյան
Աննա Ատովմյան

Ձևավորում և նկարներ
Դավիթ Բաբայան

Կոնտակտ տեղեկություններ
Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռախոս՝ (37410) 522170
Ֆաքս՝ (37410) 226470
Վեբ-կայք՝ www.unison.am
Էլ. փոստ՝ unison@unison.am

«Ունիսոն» ՀԿ ©2007 Unison NGO